Ֆրանսիայի և Հնդկաստանի միջև համագործակցության խորացումը. հեռանկարներ Հայաստանի համար

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 03.02.2024թ.

2024 թ. հունվարի վերջին Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի Հնդկաստան կատարած այցից հետո Փարիզի և Նյու Դելիի միջև ստորագրվել է համագործակցության համաձայնագրերի փաթեթ՝ պաշտպանական արդյունաբերության, քաղաքացիական ավիացիայի, թվային տեխնոլոգիաների, միջուկային էներգետիկայի, տիեզերական հետազոտությունների և այլ ոլորտներում:

Իրադարձությունը չի կարելի աղմկահարույց անվանել, քանի որ ֆրանս-հնդկական համագործակցությունը, հատկապես պաշտպանական ոլորտում, արդեն երկար պատմություն ունի: Մասնավորապես, ՖՀ-ն հնդկական ռազմարդյունաբերական համալիրի համար զենքի և տեխնիկայի երկրորդ մատակարարն է ՌԴ-ից հետո: Եվ, այնուամենայնիվ, միջուկային տերությունների միջև նոր համաձայնագրերը պարունակում են մանրամասներ, որոնք վկայում են նրանց փոխգործակցության և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ռազմաքաղաքական խնդիրների լուծման էապես աճող որակի մասին:

Միջազգային լրատվամիջոցները, վկայակոչելով Փարիզի և Նյու Դելիի պաշտոնական հաղորդագրությունները, ի թիվս այլ համաձայնագրերի, վկայակոչում են տարբեր տեսակի զենքերի, այդ թվում՝ սուզանավերի և ուղղաթիռների համատեղ արտադրության համաձայնագիրը: Հատկանշական է, որ այս համաձայնագրի առնչությամբ կողմերն ընդգծել են, որ համատեղ ռազմական արտադրանք կմատակարարվի նաև *«բարեկամական երկրներին»:*

Այս *«բարեկամական երկրների»* ցանկը Ֆրանսիայի և Հնդկաստանի դեպքում բավականին ընդարձակ է, և բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ երկու կողմերն էլ տեսնում են Հայաստանն այս ցուցակում և, ենթադրաբար, ոչ վերջին տեղերում: Հաշվի առնելով Երևանի և Փարիզի ու Նյու Դելիի միջև վերջին մի քանի տարիների դինամիկ աճող հարաբերությունների ողջ շրջանակը, տարածաշրջանային և աշխարհաքաղաքական միտումների վերաբերյալ նրանց դիրքորոշումների համընկնումը, ինչպես նաև սպառազինությունների մատակարարման ոլորտում փոխգործակցության կուտակված փորձը, կարելի է ենթադրել, որ Հայաստանը կարող է դառնալ այն երկրներից մեկը, որը կշահի այս գործարքից: Խոսքն, իհարկե, ոչ թե սուզանավերի կամ հենց ուղղաթիռների

մասին է, այլ այն զինատեսակների, որոնք առաջին հերթին են անհրաժեշտ ՀՀ զինված ուժերին:

Տեսականորեն նման սխեման թույլ կտա ՆԱՏՕ-ի անդամ Ֆրանսիային տեխնիկապես վերացնել Հյուսիսատլանտյան դաշինքում գործող սպառազինությունների վերաբերյալ ներկայիս տաբուն ՀԱՊԿ այնպիսի անդամ-երկրի համար, որը Հայաստանն է: Ուստի միանգամայն համոզիչ է հնչում այն ենթադրությունը, որ Փարիզն արդեն գտել է Երևանին ընդլայնված ռազմական օժանդակության օրինականացման հարցի լուծումը:

Ավելի լայն համատեքստում Փարիզի և Նյու Դելիի միջև հարաբերությունների բազմամակարդակ խորացումը կարելի է դիտարկել Արևմուտք–Արևելք առանցքի երկայնքով Եվրասիայում ձևավորվող նոր ռազմաքաղաքական դաշինքի տրամաբանության ներքո, որի մասին ուղղակիորեն հայտարարել է Հնդկաստանի վարչապետ Նարենդրա Մոդին՝ 2023 թ. օգոստոսին Հունաստան կատարած իր պատմական այցի ժամանակ: Հիշյալ այցի ընթացքում, ի թիվս այլոց քննարկվել են Հնդկաստանի և Հունաստանի միջև դաշինքի հեռանկարները, ինչպես նաև Հայաստանի՝ դրան միանալու հնարավորությունը: Այն ժամանակ Ֆրանսիայի մասին դեռևս չէր հիշատակվում, բայց, հաշվի առնելով, այս բոլոր երկրների հետ Փարիզի ջերմ և ակտիվ հարաբերությունները, ինչպես նաև Ֆրանսիայի նախկին կշիռը վերականգնելու Մակրոնի դրսևորած հավակնությունները, չի կարելի բացառել, որ Հինգերորդ Հանրապետությունը շարժվում է դեպի նոր ձևավորվող դաշինքին անդամակցության և ձգտում է դեպի ընդլայնման քաղաքականություն, որն աշխարհագրորեն կներառի Արևմտյան Միջերկրականից մինչև Հնդկական օվկիանոսի հարավ-արևելքն ընկած տարածաշրջանը, որտեղ էլ, ի դեպ, Մակրոնի և Մոդիի միջև վերջին պայմանավորվածությունների համաձայն, ֆրանսիական և հնդկական նավատորմերը կիրականացնեն համատեղ ուսումնական և հետախուզական միջոցառումներ: